

---

**«ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ  
ԿԱՌՈՒՑԱԿՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

**ԼԻԼԻԹ ՇԱՔԱՐՅԱՆ**

*«Մենք ապրում ենք պատմական ժամանակահատվածում, որտեղ փոփոխություններն այնքան արագացված են, որ մենք սկսում ենք տեսնել ներկան միայն այն ժամանակ, երբ այն տակավին անհետացել է»:*

**Ռ. Դ. ԼԵՅՆԳ**

20-րդ դարի երկրորդ կեսը նշանավորվել է արձատական փոխակերպումներով հասարակական կյանքում նոր տեխնոլոգիաների մշակման և ներմուծման, կապի և հաղորդակցման նոր միջոցների ձևավորման դաշտում: Դրանց հետ մեկտեղ փոփոխվել են նաև համակարգաստեղծ սոցիալական կապերը և սոցիալական փոխազդեցության ձևերը: «Իրականության փոփոխությունը տեղի է ունենում մեր աչքերի առջև, թեև տեսողական առումով այն ոչ միշտ է նկատելի: Աննախադեպ արագությամբ ձևավորվում են նոր արժեքային համակարգեր, հասարակական հարաբերությունների նոր մոդելներ ու վարքաձևեր, ինչպես նաև նոր կազմակերպություններ և հաստատություններ»<sup>1</sup>:

Հասարակական զարգացումների նման համատեքստում բազմաթիվ հասարակագետներ սկսեցին առաջադրել տարբեր հայեցակարգեր՝ բացատրելու հասարակությունում և առհասարակ ամբողջ աշխարհում տեղի ունեցող փոխակերպումները՝ հայեցակարգեր, որոնք բնութագրում էին ժամանակակից հասարակությունը որպես արձատապես նոր տիպի հասարակություն, մինչ այդ գոյություն ունեցողներից տարբեր: Այդ առումով Թոֆլերը նշում է. «Մեր կյանքում նոր տիպի քաղաքակրթություն է ծնվում, և կույր մարդիկ ամենուրեք փորձում են այն անտեսել: Այդ նոր տիպի քաղաքակրթությունն իր հետ բերում է կյանքի նոր ոճ, փոփոխվում են ուղիները, որոնցով մենք առաջնորդվում ենք կյանքում, նոր տնտեսական հարաբերություններ, նոր քաղաքական կոնֆլիկտներ են առաջանում, և դրանից բացի՝ փոփոխության է ենթարկվում նաև ամբողջ գիտակցությունը: Այդ նոր քաղաքակրթության հիմնաքարերն արդեն առկա են ... »<sup>2</sup>:

---

<sup>1</sup> **Kusio U.** 2006. Według McLuhana, według Kontynuatorów, według krytyków. In **Sokołowski, M.** (ed.), Definiowanie McLuhana. Media a perspektywy rozwoju rzeczywistości wirtualnej. Olsztyn, seite 42.

<sup>2</sup> **Тоффлер Э.** Третья волна. М., 1999, с. 26.

Շնորհիվ այդ ամենի, 20-րդ դարի 60-ական թվականներից սկսած՝ հասարակական զարգացումների համապատկերում ձևավորվել էին տարաբնույթ մոտեցումներ հասարակական զարգացման որակապես նոր փուլ մտնող քաղաքակրթության վերաբերյալ: Այդ քաղաքակրթությունը բնութագրվում էր որպես հետինդուստրիալ կամ տեղեկատվական հասարակություն, որի առանցքային առանձնահատկությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների որոշիչ դերն էր:

«Հետինդուստրիալ հասարակություն» հասկացությունը գիտական շրջանառության մեջ է դրել ամերիկացի սոցիոլոգ Դ. Ռիսմենը դեռևս 1958 թ.<sup>3</sup>:

Սակայն հետինդուստրիալ հասարակության տեսության հիմնադիրը համարվում է ամերիկացի սոցիոլոգ Դ. Բելլը, ով առաջիններից մեկն էր, որ «Գալիք հետինդուստրիալ հասարակություն» գրքում համակարգային վերլուծության ենթարկեց հետինդուստրիալ հասարակության հայեցակարգը: Ինչպես գրում է Դ. Բելլը՝ «Տեխնոլոգիաների զարգացման հետևանքով նոր ձևավորվող հասարակություններում հիմնական արտադրող ուժը դառնում է գիտությունը: Այդ տիպի հասարակության զարգացման ներուժը պայմանավորված է ինֆորմացիոն և գիտական գիտելիքի ծավալներով»<sup>4</sup>:

Վերլուծելով նոր ձևավորվող հասարակարգի համակարգաստեղծ գործոնները՝ Բելլն առանձնացնում է հետևյալ հիմնական բնութագրիչները. տեխնոլոգիզացիա, ծառայությունների ինստիտուտի ձևավորում, կրթական համակարգի կազմակերպում, տեխնիկական մասնագետների դասի նշանակալի դեր, նորամուծությունների դեպքում՝ տեսական գիտելիքի դերի աճ, ինտելեկտուալ տեխնիկայի ստեղծում և այլն: Հեղինակը եզրակացնում է, որ հասարակության մեջ նկատվում է անցում զարգացման ինդուստրիալ փուլից դեպի հետինդուստրիալը, որն ուղեկցվում է տնտեսության մեջ ոչ թե արտադրական, այլ ծառայությունների ոլորտի գերակայությամբ, իսկ զբաղվածության կառույցում՝ ֆիզիկական աշխատանքի փոխարինմամբ «սպիտակ օձիքավորների» աշխատանքով: «Գալիք դարաշրջանում տնտեսական և սոցիալական կյանքի, գիտելիքի արտադրության, ինչպես նաև աշխատանքային գործունեության բնույթի տեսանկյունից սկսում է վճռորոշ նշանակություն ձեռք բերել հեռահաղորդակցությունների վրա հիմնված նոր սոցիալական կացութաձևի կայացումը: Ինֆորմացիայի ու գիտելիքի կազմակերպման և մշակման բնագավառում տեղի ունեցող հեղափոխությունը միաժամանակ կապվում է հետինդուստրիալ հասարակության կայացման հետ, որում կենտրոնական դեր է խաղում համակարգիչը»<sup>5</sup>:

Հետինդուստրիալ հասարակության տեսություններում առաջ է քաշվում պատմական զարգացման յուրօրինակ դիտանկյուն, որը կարելի է բնութագրել որպես եռաստիճան հայեցակարգ: Ըստ այդ տեսությունների՝ հասարակությունն անցնում է զարգացման երեք փուլ՝ նախահնդուստրիալ (ագրարային), ինդուստրիալ և հետինդուստրիալ: Այս համատեքստում Է. Թոֆլերը հասարակության զարգացման պատմությունը բաժանում է երեք

<sup>3</sup> Տե՛ս **Riesman D.** Leisure and Work in Post-Industrial Society // Mass Leisure / Eds. E. Larrabee, R. Meyersohn. Glencoe (111.), 1958:

<sup>4</sup> **Белл Д.** Грядущее постиндустриальное общество. М., 1999, с. 225.

<sup>5</sup> **Белл Д.** Социальные рамки информационного общества // "Новая технократическая волна на Западе". М., 1986, с. 330.

ալիքների հետևանքով ձևավորված քաղաքակրթությունների, որտեղ ներկա դարաշրջանը բնութագրվում է որպես «երրորդ ալիքի քաղաքակրթություն»: «Երրորդ ալիքը ձևավորվում է իբրև իրապես նոր կացութաձև՝ հիմնված էներգիայի նորացված աղբյուրների, նոր արտադրատեղանակների, նոր ոչ նուկլեար ընտանիքի, արմատապես վերափոխված դպրոցների, ապագայի կորպորացիաների և առհասարակ նոր կառուցվածքի վրա\*։ Կառուցակցվող քաղաքակրթությունը ձևավորում է նոր վարքագծային կանոնակարգ՝ մեզ դուրս բերելով էներգիայի, փողի և իշխանության շրջանակներից»<sup>6</sup>:

Նոր տեխնոլոգիաների զարգացման, տեղեկատվական հոսքերի տարածման և գլոբալ կառավարման համատեքստում արդի հասարակությունը հիմնվում է տեղեկատվական փոխազդեցության կամ հաղորդակցության վրա, ինչն էլ տեղեկատվական իրականության նոր իրողություն է ստեղծում, որը մասնագիտական գրականության մեջ ստացել է «տեղեկատվական հասարակություն» անվանումը: Հետինդուստրիալ կամ տեղեկատվական հասարակության տեսության ներկայացուցիչներ Դ. Բելլը և Է. Թոֆլերը միասնական մոտեցման հետևողներ չեն, սակայն որպես տեղեկատվական հասարակության առանցքային բնութագրիչներ առանձնացնում են արտադրության նոր միջոցները, զբաղվածության բնույթի փոփոխությունները և տեսական գիտելիքի նշանակալի դերը այդ գործընթացում: Նոր զարգացող քաղաքակրթությունը ըստ էության նրանք ներկայացնում էին որպես սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման հերթական փուլ՝ նախահնդուստրիալ (ագրարային) և հնդուստրիալ հասարակություններից հետո:

Տեղեկատվական հասարակության հայեցակարգի ձևավորումը պայմանավորված է նոր քաղաքակրթության կառուցակցմամբ, որի հենքում ընկած են բազմապիսի տեղեկատվական գործընթացներ: Այս առումով 1970-80-ական թվականներին տեղեկատվական հասարակության հայեցակարգի զարգացման գործում մեծ ներդրում ունեցան Տ. Սթունյերը և ճապոնացի գիտնական Ե. Մասուդան: Համակարգային այս նոր իրականությունն ուսումնասիրող տեսաբանները շեշտը դնում էին ոչ այնքան տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, որքան տեխնոլոգիական հասարակության կայացման վրա, կամ էլ բնութագրում էին ժամանակակից քաղաքակրթությունն՝ առաջնորդվելով մարդկանց կյանքի վրա տեղեկատվական տեխնոլոգիաների և գիտելիքի շարունակաբար մեծացող ազդեցությամբ: Այսպես՝ Տ. Սթունյերը նշում է. «Տեղեկատվությունը կապիտալի նման կարելի է կուտակել հետագա օգտագործման համար: Տեղեկատվական հասարակությունում ազգային տեղեկատվական ռեսուրսները հարստության մեծագույն պոտենցիալ աղբյուրներն են»<sup>7</sup>:

Ավելին, մասնագիտական գրականության մեջ տեղեկատվական է սահմանվում այն հասարակությունը, որում մարդիկ հնարավորություն ու-

\* Թոֆլերն այն անվանում է «էլեկտրոնային քրթեջ»:

<sup>6</sup> Тоффлер Э., *Узл. анал.*, էջ 33 - 34:

<sup>7</sup> Стоуньер Т. Информационное богатство: профиль постиндустриальной экономики. М., 1992, с. 393.

նեն առնչվելու տեղեկատվության հուսալի աղբյուրների հետ, ինչի շնորհիվ վերանում է ձեռքի աշխատանքը, իսկ արտադրությունը մեքենայացվում ու ավտոմատացվում է: «Տեղեկատվական հասարակությունը կառուցվում է նոր հենքով՝ հիմնված համակարգչային հաղորդակցությունների վրա: Հասարակության ձևավորման և զարգացման շարժիչ ուժը դառնում է ոչ թե նյութական, այլ ինֆորմացիոն արժեքների արտադրությունը»<sup>8</sup>:

Մինչդեռ նույն ժամանակահատվածում զարգանում էր նաև հետարդիականության տեսությունը, որի ներկայացուցիչները (ժ. Բոդրիյար, Մ. Պոստեր, Ջ. Բաունան) այն մոտեցման հետևորդներն էին, որ տեղեկատվությունը ոչ ավելին է, քան սիմվոլները և կերպարները, որոնք շրջապատում են մեզ ամենուրեք և հանդիսանում են մարդկային գործունեության հիմքը: Ոչինչ չի կարելի համարել հասկանալի և թափանցիկ, քանի որ ամեն ինչ ստեղծվում և հասկացվում է լեզվի օգնությամբ, որը չունի միասնական/ընդհանուր նշանակություններ: Հետևապես, մենք ապրում ենք մի աշխարհում, որը ստեղծված է տեղեկատվության միջոցով և, ինչպես նշում է ժ. Բոդրիյարը՝ «Տեղեկատվությունը գնալով շատանում է, իսկ իմաստը քչանում է»<sup>9</sup>:

Այս տեսանկյունից տեղեկատվական հասարակությունում նշանները կորցնում են իրենց նշանակությունը, և մարդիկ սկսում են առաջնորդվել ոչ թե աշխարհում ընդունված սկզբունքներով, այլ սեփական ցանկություններով: Ինչպես պնդում էր Պոստերը՝ «Տեղեկատվական հասարակության համատեքստում մենք ունենք նշանակությունների ամբողջություն, որոնք փոխանցված են, սակայն որոնք չունեն նշանակություն»<sup>10</sup>:

1980-ականների վերջում ի հայտ եկան այնպիսի տեսություններ, որոնք նոր դիտանկյունից էին մեկնաբանում տեղեկատվական հասարակությունը, մասնավորապես, Է. Գիդդենսի «Բարձր մոդեռնի» տեսությունը<sup>11</sup>, որում հեղինակը ժամանակակից հասարակությունը դիտարկում է գլոբալիզացիոն գործընթացների տարածման պրիզմայով, նկարագրում է սոցիալական փոխազդեցության նոր ձևերը, որոնք ձևավորվել են տարածաժամանակային հեռավորության պայմաններում:

1990-ականների կեսերին առանձնանում է տեղեկատվական հասարակության վերաբերյալ Մ. Կաստելսի տեսությունը<sup>12</sup>, որում հեղինակը մատնանշում է ժամանակակից հասարակության այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են հասարակության սեզմենտավորված կառուցվածքը, միջազգային փոխազդեցությունների դերի մեծացումը ինչպես քաղաքական, այնպես էլ մշակութային ոլորտներում, ժամանակի և տարածության համակարգերի փոխակերպումը:

<sup>8</sup> Masuda Y. The Information Society as Post-Industrial Society. World Future Society, 1983, p. 29.

<sup>9</sup> Baudrillard J. In the Shadow of the Silent Majorities, or, The End of the Social and Other Essays. Translated by Paul Foss, John Jhonson and Paul Patton. New York, 1983, p. 95.

<sup>10</sup> Poster M. The Mode of Information: Poststructuralism and Social Context. Cambridge, 1990, p. 63.

<sup>11</sup> Стен Гидденс Э. Современная теоретическая социология: Энтони Гидденс: Реф. сб. М., 1995:

<sup>12</sup> Стен Кастельс М. Информационная эпоха: экономика, общество, культура. М., 2000:

Տեղեկատվական հասարակության հիմնական տեսությունների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել հասարակական կյանքի հիմնական ոլորտներում տեղի ունեցած փոփոխությունները, որոնք բնորոշում են ժամանակակից հասարակությունը որպես տեղեկատվական:

Այսպես, տեղեկատվական հասարակության ձևավորումը նախ և առաջ կապվում է **տնտեսության ոլորտում** տեղեկատվության ազդեցությամբ տեղի ունեցող փոփոխությունների հետ: Մասնավորապես, տնտեսական ոլորտում շեշտադրվում է տեղեկատվական բնույթի արտադրանքի ծավալի աճը, այսինքն՝ արտադրության ընդհանուր ծավալում ոչ նյութական գործոնի դերի բարձրացումը: Վերլուծելով նոր հասարակարգի տնտեսության կողմերը՝ ակնհայտ է դառնում, որ նոր տեխնոլոգիաների ներդրմամբ ընդհանուր տնտեսության ծավալներում տեղի է ունենում ծառայությունների հատվածի աճ: Ավելին, նոր տեխնոլոգիաները ոչ միայն փոփոխություններ են մտցնում արտադրության տեխնոլոգիական գործընթացում, այլ նաև դառնում են տնտեսության գլոբալացման նյութական հիմքը<sup>13</sup>:

Տնտեսության ոլորտում փոփոխություններն ուղեկցվում են սոցիալական շերտավորման և աշխատանքային հարաբերությունների փոխակերպումներով: Սոցիալական ոլորտի փոփոխությունները դրսևորվում են բնակչության զբաղվածության կառուցվածքի փոփոխություններով, մասնավորապես դիտվում է զբաղվածության կրճատում արտադրության ոլորտում և փոխարենը՝ զբաղվածության աճ ինֆորմացիոն ոլորտում, այլ կերպ ասած՝ ձեռագործ աշխատանքից անցում է կատարվում մտավոր աշխատանքի: Այս փոփոխությունները հանգեցնում են մի իրավիճակի, երբ աշխատողների հիմնական մոտիվացիան դառնում է սեփական ունակությունների, գիտելիքների և հմտությունների իրացումը, ձգտումն օգտագործել սեփական մասնագիտական որակները<sup>14</sup>: Արտադրության գործընթացի պլանավորումը և շրջապատող մարդկանց հանդեպ հոգատարությունը դառնում են գործունեության հիմնական նպատակ, և, ինչպես Բելլն է նշում՝ «Ձևավորվում է սոցիալական բարձր պատասխանատվությամբ օժտված հասարակություն»<sup>15</sup>:

Նոր ժամանակաշրջանի տեսաբանները, զբաղվելով տնտեսական համակարգի վերլուծությամբ, այս նոր տիպի հասարակությունն արդեն չեն ներկայացնում այդքան պայծառ գույներով: Մ. Կաստելսը գրում է. «Աշխատանքում նոր տեխնոլոգիաների օգտագործման սկզբունքով իրականացվող շերտավորումը հանգեցնում է սոցիալական կառուցվածքի հատվածայնացման, այսինքն՝ աշխատանքային հարաբերությունների անհատականացմանը՝ կախված յուրաքանչյուր աշխատողի հմտություններից, ունակություններից և արհեստավարժությունից»<sup>16</sup>: Ձևավորվում է, այսպես կոչված, «համակարգային վերլուծաբանների» նոր շերտ, որի համար բնութագրական է ճկունությունը, հարմարվողականությունը փոփոխ-

<sup>13</sup> Տե՛ս **Кастельс М.**, նշվ. աշխ., [http://sbiblio.com/biblio/archive/kastels\\_inform/](http://sbiblio.com/biblio/archive/kastels_inform/)

<sup>14</sup> Տե՛ս **Товфлер Э.** Будущее труда // "Новая технократическая волна на Западе". М., 1986, [http://www.gumer.info/bibliotek\\_Buks/Culture/Toffler/\\_FutW.php](http://www.gumer.info/bibliotek_Buks/Culture/Toffler/_FutW.php)

<sup>15</sup> **Bell D.** The Coming of Post-Industrial Society: A Venture in Social Forecasting. BasicBooks; 1976, p. 127-128.

<sup>16</sup> **Кастельс М.** նշվ. աշխ., [http://sbiblio.com/biblio/archive/kastels\\_inform/](http://sbiblio.com/biblio/archive/kastels_inform/)

վող գործընթացներին և տեղեկատվության մշակման հմտությունը: Մինչդեռ «տեղեկատվական աշխատանք» կատարելու հմտություններ չունեցող մարդիկ ենթակա են վտանգի՝ փոփոխություններին արագ արձագանքելու ունակության բացակայության պատճառով<sup>17</sup>:

Նոր տեխնոլոգիաների զարգացումը, հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխությունները առաջ են բերում փոխակերպումներ նաև հասարակության **հոգևոր ոլորտում**. արդիական է դառնում տեղեկատվական հատվածում զբաղված մարդկանց նոր արժեքների, նոր աշխարհայացքի ձևավորման հարցը: Ինչպես նշում է Չ. Լիդբետերը՝ «Վրդի դարաշրջանում տեղեկատվությունը դառնում է հասարակության զարգացման հիմնական գործոնը: Բանականությունը, ստեղծագործելու ունակությունը, «ցանցերի» հարմարեցումը և կիրառման ունակությունը նոր տնտեսության հաջողության բանալին են, քանի որ բարեկեցությունը ձեռք է բերվում ոչ թե ֆիզիկական ջանքերով, այլ գաղափարներով, գիտելիքներով, տաղանդով և ստեղծագործությամբ»<sup>18</sup>: Նոր գաղափարախոսության կրողների շարքին են դասվում դիզայներները, ինժեներները, երաժիշտները, բիոտեխնոլոգները և այլք: Այսպիսով, խոսքն այնպիսի աշխատողների նոր շերտի ձևավորման մասին է, որոնք ստեղծում են նոր արժեքներ և իդեալներ, ձևավորում են նոր մշակույթ և հանդես են գալիս որպես հասարակության լայն զանգվածների շրջանակներում այդ իդեալների նախաձեռնողներ և տարածողներ:

**Մշակույթի ոլորտում** տեղեկատվական հասարակարգին բնորոշ փոխակերպումները դրսևորվում են առօրյա կյանքում շրջանառվող տեղեկատվության ծավալների աճով: Հեռուստաալիքների ու ռադիոկայանների բազմազանությունը, համացանցի հասանելիության ընդլայնումը, տպագիր արտադրանքի ծավալի մեծացումը, ինչպես նաև ինտերակտիվ տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն են ընձեռնում արտադրելու, փոխանցելու և սպառելու ավելի մեծ քանակությամբ տեղեկատվություն, քան երբևէ: Ժամանակակից տեղեկատվական հասարակությունում կյանքը սահմանվում է տարաբնույթ հաղորդագրությունների քանակության աճով, որոնք ազդում են մեր ընկալման, աշխարհայացքի և վարքի վրա: Մենք ապրում ենք տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցած միջավայրում, ինչը նշանակում է, որ կյանքն էականորեն պայմանավորված է նշաններով, այն ծավալվում է մեր և ուրիշների վերաբերյալ հաղորդագրությունների փոխանակման և ստացման գործընթացներում: Ինչպես փաստում են պոստմոդեռնիստները, տեղի է ունենում նշանների քանակության էական աճ, որը հանգեցնում է այդ հաղորդագրությունների իմաստի կորստին: Բացի այդ, լսարանը ներկայումս ստեղծագործ է, օժտված է ինքնագիտակցությամբ և ռեֆլեքսիայով, և նոր նշաններն ընդունում է թերահավատորեն և հեզմանքով, ինչի հետևանքով էլ հեշտությամբ խախտվում է դրանց առաջնային իմաստը<sup>19</sup>:

Ժամանակակից պայմաններում միևնույն ժամանակ տեղի է ունենում տարանջատում ավանդական մշակույթից, ինչն իր ազդեցությունն է ունե-

<sup>17</sup> Տե՛ս **Кастельс М.** նշվ. աշխ., [http://sbiblio.com/biblio/archive/kastels\\_inform/](http://sbiblio.com/biblio/archive/kastels_inform/)

<sup>18</sup> **Leadbeater Ch.** Living on Thin Air: The New Economy. Viking, 1999, p. 18.

<sup>19</sup> Տե՛ս **Baudrillard J.**, նշվ. աշխ., էջ 95:

նուն ոչ միայն փոխազդեցության և ապրելաոճի վրա, այլ նաև պահանջում է ինքնության նոր կառուցվածքներ:

Նման դիրքորոշման կողմնակից է Ս. Կաստելսը, ով ազգային պետությունների ոչնչացման, կայացած սոցիալական կառուցվածքների քայքայման պայմաններում խոսում է մարդուն ծանոթ կողմնորոշիչների կորստի, ինքնության մշտական փնտրտուքների մասին: Ռեալ վիրտուալության մշակույթի պայմաններում, երբ իրականությունը հազեցած է վիրտուալ կերպարներով, տեղի է ունենում լսարանների հատվածայնացում, որոնցից յուրաքանչյուրը ստեղծում է իր ուրույն մշակույթը՝ իրեն բնորոշ նշաններով և կարծրատիպերով:

Ինչ վերաբերում է **քաղաքականության ոլորտում** տեղի ունեցող փոխակերպումներին, ապա այստեղ տեսաբանների մոտեցումները տարաբնույթ են: Այսպես, Թոֆլերը խոսում է ինքնակառավարվող համակարգի ձևավորման մասին, որում գիտելիքը դառնում է հարստության և իշխանության աղբյուր: Մասուդան նշում է, որ տեղեկատվական հասարակության պայմաններում զարգանում է մասնակցային ժողովրդավարությունը և ձևավորվում է հնարավորությունների հավասարություն: Գիդդենսը շեշտադրում է պետության կողմից վերահսկողության համակարգի զարգացումը, որն անհրաժեշտ է մարդկանց և այլ երկրների վերաբերյալ տեղեկատվության կառավարման համար՝ ինչպես ազգային անվտանգության, այնպես էլ պետության ներքին կառավարման նպատակներով:

Ս. Կաստելսն իշխանություն ասելով հասկանում է կամքի թելադրում՝ բռնություն կիրառելով: Ազգային պետությունները կորցնում են իրենց ուժը բիզնեսի և իշխանության միջազգային կառույցների ազդեցության ներքո, և նման հանգամանքներում ռեալ քաղաքականությունը զարգանում է ՁԼՄ-ների տարածքում:

Այսպիսով, հասարակական կյանքի ոլորտներում տեղի ունեցող փոխակերպումների վերլուծության հիման վրա տեղեկատվական հասարակությունը կարելի է բնորոշել որպես տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համատեքստում կառուցակցվող սոցիալ-մշակութային նոր իրողություն, որտեղ հասարակությունն ու նրա տնտեսական հարաբերությունները բացառապես կազմակերպված են տեղեկատվության և գիտելիքի հիման վրա, իսկ հասարակության ինքնաբնորոշման գործընթացը տեղի է ունենում տեղեկատվական մշակույթի ներքո, որն ուղեկցվում է ոչ միայն մարդկանց սոցիալական փոխազդեցության և ապրելաոճի փոխակերպումներով, այլ նաև պահանջում է ինքնության նոր կառուցվածքներ:

Նոր քաղաքակրթության ձևավորման և զարգացման համատեքստում «տեղեկատվություն» երևույթը ձեռք է բերում փոխհարաբերության հատկություն՝ հանդես գալով մի կողմից որպես յուրահատուկ արդյունաբերական արտադրանք և ձևավորելով սոցիալական իրականության ֆիզիկական/մյուսական միջավայրը, իսկ մյուս կողմից՝ որպես հասարակության ինքնաբնորոշման միջոց՝ պայմանավորելով սոցիալական փոխազդեցությունների կառուցակցումը: Այս է «տեղեկատվական» կոչվող հասարակության սկզբունքային նորությունը:

**ЛИЛИТ ШАКАРЯН – Теоретические основы конструирования концепта "Информационное общество".** – Концепт информационного общества – теоретическая модель, которая позволяет понять и проанализировать трансформации, происходящие в современной общественной жизни. Количественные изменения в сфере информации привели к возникновению качественно нового типа социального устройства – информационного общества. Оно меняет наш образ жизни буквально во всём – от повседневного быта до способа вести бизнес, влияет на то, как мы обучаем наших детей, как учимся, отдыхаем и т. д. Информационное общество – это новая социально-культурная реальность, где социум и экономические отношения всецело базируются на информации и знаниях.

В статье проанализированы различные теории информационного общества. Анализ выявляет основные направления изменений, произошедших в ключевых сферах общественной жизни. Изменения, преобразующие нашу повседневность, не только влияют на взаимодействие и жизнь людей вообще, но и требуют, в частности, новых структур идентичности.

**LILIT SHAKARYAN – Theoretical Principles of "Information Society" Concept Construction.** – The concept of Information Society is a theoretical model, which assures understanding and analyzing ongoing transformations of the contemporary society. Quantitative changes of information have shaped qualitatively new type of social order, that is to say Information Society. It forms our lifestyle, the way we live and do business, educate our children, teach and learn, spend our leisure time and so on and so forth. Information Society is a new socio-cultural reality, where the society and economic relations are primarily based on information and knowledge.

The paper aims at analyzing various theories regarding Information Society, due to which main directions of changes in key areas of social life are identified. Changes that create our everyday life not only affect the way people interact or live, but also require new structures of identity.